ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N 22/Ե-66

<7> < 02>2022թ

ք.Արտաշատ

ՀՀ Արարատի մարզպետարանը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Մ. Ստեփանյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա /այսուհետև Նվիրատու/ մի կողմից և ՀՀ Արարատի մարզի Սիսավանի մ/դ ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Նարինե Գալստյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա /այսուհետև Նվիրառու/ մյուս կողմից, հիմք ընդունելով «2022թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 «2022 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի բյուջետային ծախսերի (ըստ դասիչների) 1146 ծրագրի «Հանրակրթության ծրագիր» 12002 <հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում>: Հատկացումները օգտագործ Սիսավանի մ/դ 2022թ հաստատված ծախսերի նախահաշվին համապատասխան:

11 մանկավարժի համար

0 աշակերտի համար

2. ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

2.1 Սույն պայմանագրով պատվիրատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վերապահված լիազորությունները պատշաճ կատարելու նպատակով, կատարողին տրամադրում է

559,0 հազ. դրամ այդ թվում՝

559,0 հազ. դրամ մանկավարժի համար

0,0 հազ. դրամ աշակերտի համար

2.2 Նվիրատուն վճարումները իրականացնում է ՀՀ պետական բյուջեով հաստատված եռամսյակային համամասնությունների շրջանակներում:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Սույն պայմանագրով սահմանված պայմանների չկատարման դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1 Սույն թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ մանկավարժների և աշակերտների թվի ավելացման կամ պակասեցման հետ կապված պայմանագիրը ենթակա է փոփոխման:
Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր համաձայնագիր կնքելու միջոցով:

4.2 Սույն պայմանագիրը իրավաբանական ուժ է ստանում կնքման պահից և գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 25-ը:

4.3 Սույն պայմանագիրը կազմված է մեկ էջից, գրված է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՎԻՐԱՏՈՒ	ՆՎԻՐԱՌՈՒ
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ	Սիսավանի մ/դ
ք. Արտաշատ, Օգոստոսի 23/60	ՀՀ ֆինանսների նախարարության գ/վ
Հ/Հ 900411002570	Հ/Հ 900428000138
	ՀՎՀՀ 04103841
	Դպրոցի տնօրեն
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	
_____ Մ. Ստեփանյան	_____ Ն. Գալստյան
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.